

Կարգադրանք

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Մի 14



ՏՊԱԳՐԻՉ

Ն Շ Ա Ն Կ . Պ Ե Ր Պ Ե Ր Ե Ա Ն

Բան



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒ HANRAKIDAGUE
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 14 || 5 ԱՊՐԻԼ 1903



ԶԱՏԻՆ

Ի՞նչ անուշ օր, գարունն է որ կը բերէ,
Զատիկն աղուոր, պծնած չքնաղ վարդերէ,
Շուրջս՝ ժպիտ, ծաղիկ, վայելք կը տեղան,
Երգեն, կայտաւեն՝ պարմանն, աղջիկն ու տղան,
Անուշ խոհեր շիկնեն ճակատը կուսին,
Սա՛ Քուսնիկներն իսկ, կարծես, կեա՛նք կը խօսին:


Ի՞նչ անուշ օր, գարունն է որ կը բերէ,
Զատիկն աղուոր, պծնած չքնաղ վարդերէ,
Դուրս կը նայիմ, — Բնուածն հրճուա՛նք է ամբողջ,
Զիրար զգուեն՝ ծիւ, կոկոն, թերթ ու բողբոջ,
Գոգ՝ մանկիկ մ'է աշխարհ, մատաղ ու բողբոջ,
Վայելք անոնց՝ որք են անհոգ ու առողջ:

Ի՞նչ անուշ օր, գարունն է որ կը բերէ
Զատիկն աղուոր, պծնուած չքնաղ վարդերէ,
Ո՛հ, կը ժպտին քոյրիկներս ալ երջանիկ,
Լուսնակն երգէ զերթ մի սիրուն դեղձանիկ,
Իսկ Արուսեակն զուարթօրէն կը խօսի,
Ու շրթունքէն կարծես թէ մեղր կը հոսի:

Ի՞նչ անուշ օր, գարունն է որ կը բերէ,
Զատիկն աղուոր, պծնուած չքնաղ վարդերէ:

Տիարպէքիը

Լ. ՍՐԱՊԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՅԱՐԱՆԻ ՄԷՋ

41. — Եթե վանառական լինիմ

Եթէ վաճառական լինիմ, պիտի յիշեմ, որ ուղղամտութիւնը պէտք է տրի իմ ամեն գործառնութիւններու մէջ:

Երբ գնորդ մը մէկ մէթը կտոր ուզէ, մէկ քիւօ ալ, ճիշտ մէկ մէթը պիտի չափեմ եւ ոչ թէ 95 հարիւրորդամէթը, ոչ ալ մէկ քիւօին տեղ ինըհարիւր կրամ, քանի որ ամբողջին գինը կը վճարէ: Եթէ պակաս տամ կը նշանակէ թէ կը գողնամ: Երբ մէկուն կ'ապահովցնեն թէ առած կտորը բոլորովին բուրդ է եւ շատ լաւ գետեն որ բամպակախառն է, գողութիւն կ'ընեն:

Վաճառականի մը ուղղամտութիւնը հոն է, որ ծախած առարկաներուն մէջ ոչ ոք խաբէ, ոչ քանակով եւ ոչ որակով:

Պիտի յիշեմ որ ուղղամտութիւնը վանառականին պատիւն է:

42. — Վանառականութեան մէջ լաւ եւ վատ գործերը

Տիկին Անտրէ եւ Տ. Վիթթորին մանրավաճառի խանութ ունին: Տ. Անտրէինը աւելի ճոխ է: Օր մը Տ. Վիթթորին կը նեղուէր, ստակի պէտք ունէր: Կը դիմէ դրացուհիին եւ անոր կ'ըսէ. «Գործերս լաւ չեն երթար, գնէ բոլոր ապրանքներս, ես կը քաջուիմ վաճառականութենէ», Այն ատեն Տ. Անտրէ ինքնիրեն կ'ըսէ. «Պիպի օգտուիմ դրացիիս նեղ վիճակէն, ապրանքները իրենց արժեքէն շատ վար գնով պիտի գնեմ, լաւ գործ մը պիտի ընեմ»: Տ. Անտրէ շատ աժան գին մը առաջարկեց գեղեցիկ եւ լաւ ապրանքներուն եւ խեղճը հարկէն ստիպեալ տուաւ, թէեւ քիչ մը ստակ առաւ, բայց ոչ այնչափ որչափ պէտք ունէր: Տ. Անտրէն գէշ վարուեցաւ:

Թող արդարութիւնը առաջնորդ լինի մեր բոլոր վաճառականական գործերուն: Մէկու մը նեղութենէն չօգտուինք գնելով անոր ունեցածը, բոլորովին զայն կործանելով անոր կորուստովը հարստանալու համար: Յիշեմք Աւետարանի խօսքը, թէ ինչ որ կամիք որ ուրիշները ձեզ ընեն դուք ալ նոյնը րեւ անոնց:

43.—Եթե ուրիշներուն փոխ պատժեն ունենամ

Թերեւս օր մը ստիպուիմ ուրիշներուն քով մտնել անոնց աշխատութեան օգնելու համար կամ անոնց ծառայելու :

Վարած համեստ պաշտօնիս համար երբեք ինքզինքս նուաժանացած պիտի չհամարիմ. որովհետեւ գիտեմ թէ մարդուն արժանիք տուողը բրած գործը, վարած պատժենը չէ, այլ այն յատկութիւնը որնա կը ցուցնէ իր պարտականութիւնը կատարելու մէջ :

Ինծի վստահացած շահերուն վրայ պիտի հսկեմ, ինչ որ ինձ չվերաբերիր ինծի պիտի չսեպականեմ : Խօսքերուս եւ վարմունքիս մէջ չափաւոր եւ խորհմ պիտի լինիմ. վաճառատան մէջ անցած դարձած բաները ոչ ոքի պիտի պատմեմ : Շողոքորթութիւն պիտի չընեմ ընծայ ոտանալու՝ կամ ժառանգութեան մէջ մաս ունենալու համար, վերջապէս որոնց քով որ ապրիմ ընտանիքի անդամի պէս պիտի լինեմ : Այս պայմաններուն մէջ պիտի յիշեմ, թէ ուղղամտութեան եւ զաղճնապահութեան դէմ գործելը ցածութիւն է եւ վստահութեան զեղծում :

44.—Եթե բնականի մայր լինիմ

Ամէն օր կը լսեմ, որ չուրջս կ'ըսեն. «Փոքրիկ աղջիկ ինչպէս երջանիկ ես, վայելէ երջանկութիւնդ. պիտի տեսնես, թէ կեանքը ինչպէս դժուարին եւ տառապեցուցիչ է, երբ ընտանիքի մայր լինիս» :

Այս անհանգիստ կ'ընէ զիս քիչ մը... կը խորհիմ, թէ այս կոչումը շատ դժուար պէտք է լինի, քանի որ ամէն մարդ համաձայն է նոյնը յայտնելու : Եթէ այսպէս է, այժմէն կ'ուզեմ խորհիլ այն պարտականութիւններուն վրայ, որ պիտի ունենամ ընտանիքի մայր եղած ժամանակը, կը փափաքիմ կանխաւ անոր համար պատրաստուիլ լաւ դիտաւորութիւններ առաջադրելով : Համբերութիւն պիտի ունենամ, որովհետեւ պիտի յիշեմ, թէ մայրս որչափ համբերութեան պէտք ունէր զիս մեծցնելու համար : Խոհեմութիւն պիտի ունենամ չընել ո՛ր եւ է ձեռնարկութիւն ընտանիքի շահերուն դէմ՝ լաւ տնտես պիտի լինիմ, որպէսզի միայն ճիշտ պէտք եղածին չափ ծախսեմ : Պիտի սիրեմ աշխատութիւնը, իմ տունս տեղս պիտի փափաքիմ մաքուր պահել, գեղեցկացնել. ժամանակս պիտի չգործածեմ դրացիներու հետ շաղակրատելով, այցելութիւններով կամ պարապ տեղը դուրս ելլելով : Վերջապէս բոլոր արժու պիտի սիրեմ եւ խնամեմ շուրջս եղբայրներ : Ինծի բնաւ դժուար պիտի չլինի կեանքը բազմաւ եւ երջանիկ դարձնելը :

ԿԻՐԱԿԻԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

— — —

ԱՒԱԳ ԳԱՐԱԹ



ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ

Ի՞նչ միսթիկ վայրկեան, տխրազդեցիկ մթնոլորտ եւ ի՞նչ ցաւատանջ տեսարան:

Ապերախտութիւն քստմնալի, չարչարանք սարսափեցնող ու մահ անհաւատալի:

Երեկուան այդ անբիծ ու անարատ, սրբազան ու պաշտելի էութիւնն է որ հուտա գամուած կը տեսնուի ցուրտ ու կոշտ խաչին վրայ նեխոտած վայրի մը մէջ, աղտոտ ու փոշոտ տա բըլրակն ի վեր: Ի՞նչ տխուր իրականութիւն:

Երեկուան հրաւէրը, ովսաննաներն ու պատիւներն՝ ապտակի, թուքի եւ մուրի են փոխուեր: Պաշտուած մարմին մը, սիրուած դէմք մը արեան բիծեր ունի վրան. Աստուածութիւնը քարոզող համբուրուելիք բերանը կենդանութեան նշան չունի երբեք. հուր և զայրոյթ, անմեղութիւն ու հեղութիւն արտայայտող աչքերը, աւա՛ղ, գորով ու ներում չե՛ն արտայայտեր այլեւս:

Հետեւեցա՞նք իր վեհ ու պատկառելի քայլերուն. մենք, որ աչքերնիս կոյր էր ու կրցանք տեսնել, հիւանդ էինք ու կենդանացանք, անշունչ դիակ մըն էինք եւ երկնքի փառքին հետ ապրեցանք: Տեսէ՛ք, իր տենդոտ քայլերը, ծանրաբեռնեալ մարմինը Գեթսեմանիի ձորէն մինչեւ Գողգոթայի բարձունքը: Սրբեցի՞նք իր քրտնաթոր ճակատը որ իր յորդ ճառագայթումին մէջ, լուսաւորեց զմեզ:

Ապերախտ են մարդիկ:

Բարիին ու ճշմարտին այդ հիացիկ էակը տարին մատնել եպերելի շահագիտումով մը. անխիղճ գործին ձեռք զարկին, արծաթի հետ փոխանակելով իրենց անձնուէր նաւապետը: Բայց անցած էր ժամը. տնօրինուածն էր որ կը կատարուէր, խաչն էր որ պիտի նուիրագործուէր եւ ճշմարտութիւնը մահուան առջև էր որ իր աննուաճ զօրութիւնն պիտի ցայտեցնէր անմեղ գառի մը ողջակիզումովը: Ամէն բան կատարուած էր: Ո՛վ պիտի չբաղձար

հետեւող մը ըլլալ կսկծեցնող տառապեալին, ցաւակից մ'ըլլալ Անոր, միանալ Տիրոջը, Անոր խաչին հետ:

Երթանք, դիմենք ուրեմն հոն, աղօթքի տունը, ուր պիտի ամօքինջմեր վիշտերը, մեր հոգեկան խորունկ ցաւերը, Երգակցինք մենք ալ օրուան մեղանուշ երգեցողութեանց, փառք տանք խաչին, խաչելութեանը եւ թաղմանը, ու պիտի փրկուին մեր հոգիները, պիտի քաւուին անոնք: Խնկելի է այս սօնը:

ՁԱՏԻՎ

Տօն փառքի, հաւատոյ, յաղթանակի և յուսոյ: Համայն մարդկութեան համար արիւն թափող խաչեցեալ կը խոնարհեցնէ ահա իր թշնամիները, կը կանգնի գերեզմանի ցուրտ շիրմին վրայ, նոսրացնելով մահուան զօրութիւնը: Ահա՛ օր յաւիտենականին յուսոյ: Իր ճառագայթող գլուխը կը դնէ հիմա յուսոյ եւ սիրոյ սեղանին վրայ ուր կը պատարագեն զինքը, կը փառաբանեն իր ահեղ փառքը:

Երանութեան հեշտին ճամբան է որ կը պարզուի այսօր, համայն տիեզերքի առջեւ եւ տեսէ՛ք ձեր Փրկիչը հոն՝ իր Աստուածային հարստութեանը մէջ, իր սուրբ աթոռին վրայ: Աթոռք, Պետութիւնք, Հրեշտակք եւ Երկնային զօրութիւններն այսօր է որ կ'երգեն քաղցր ու մեղանուշ մեղեդին, Աստուածսրբւոյն յաղթական յարութեանը: Այսօր է որ սերովբէներ ու քերովբէներ կը խնկարկեն տիեզերքի Փրկիչը իր լայնատարած մեծութեանը մէջ: Մահն է որ կ'ընկճի հրաշալի յարութեան առջեւ եւ ուր հոգին՝ անմահ ու յաւիտենական՝ կը սլանայ անկաշկանդ զօրութեամբ մը, վե՛ր, շատ վե՛ր, դէպի երեակ միանձնութիւնն: Քահանայապետք եւ ծերոց ժողովք կը հալածեն ճշմարտութեան մտրակումէն, կը խորտակին հակառակութիւնք եւ ո՛ւր միշտ ու յաւիտեան քրիստոնէական Եկեղեցւոյն կենդանի հիմը կը կանգնէ իր հաստատ վէմը, փառք եւ պարծանք մնալով Տիրոջ անորաւ ու անբիծ Արիւնովը լուացուած կրօնին ու Եկեղեցւոյն: Գացէ՛ք ընդառաջ, «ա՛» հրաշքին անմրոնելիութեանը հանգէպ յափշտակուած կանանց, լսեցէք անոնցմէ Քրիստոսի յարութեան քաղցրալուր աւետիսը ու տարածեցէք ամենուն: Իմ խորհուրդս է այս, եկեղեցւոյն խորհուրդը, ճշմարիտ ոգւոյն ու հաւատաւոր քրիստոնէին խորհուրդը:

Շնորհաւորելի է՛ք:

Գառը զիւղ

ՌՕՄԱՆ Տ. Խ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՍԷՉ

ԺԶ. ԴԱՐ.—Մտաւորական աշխարհը իր երկար գիշերը անցուցած, ցերեկի լոյսին արշալոյսը ցաթած էր։ Կրթական խնդիրն ալ այս յեղաշրջական շարժումներուն մէջ իր բարեփոխումները գտաւ։ Մեծ վարպետներ հրապարակ ելլելով յեղաշրջեցին ինչ որ լծացած էր երկար տարիներէ յետէ։ Էրազմոս (1467—1536) անոնցմէ մին՝ թէեւ իր դարուն մէջ բարձրագոյն աթոռ մը գրաւած չէ, բայց ինք իր տեղը ունի։ Սա՛ մարդկային սեռական զանազանութիւնը արհամարհեց. աչքին առջեւ համահասար էին աղջիկն ու տղան։ միեւնոյն ուսումն ու դաստիարակութիւնը, երկուքին ալ տալ կը քարոզէր։ Միջին դարու լմբւումներու ստուերներէն դեռ բոլորովին անազատ, գիտութեան եւ պատմութեան կարեւորութիւնը ճանչցած չէր, որուն համար իր ուսումընթացքներուն մէջ շատ քիչ տեղ կը գրաւէին, եւ այս պակասը լեցնել կ'աշխատէր ու կը ճգնէր Յունարէն եւ Լատիներէն զրականութեամբ որոնց սիրահար էր հոգեւին։ Չորս սկզբունքներու վրայ շատ կը ծանրանար տղուն դաստիարակութեանը ատեն ըսելով. Ա. տղուն փափուկ միտքը եւ սիրտը, գրթութեան եւ սիրոյ առաջնորդէ եւ անոնց մէջ հրահանգէ։ Բ. Գեղարուեստական արուեստները սիրելի ընելու համար ամէն միջոց գործածէ՛, քանզի կեանքը քաղցրացնող տարրերն են անոնք։ Գ. Աշակերտին միտքը տիրացուր սրադատութեան եւ փափկանկատութեան, որովհետեւ ընկերական կեանքին մէջ մարդուն արժանիքը եւ դիրքը բարձրացնող զօրեղ պատճառներն են։ Դ. Բարոյական սկզբունքներու վրայ հիմնուած բարի կենսութեան քի մը մէջ ձգէ տղան եւ հրահանգէ ամէն կարելի եւ նպաստաւոր միջոցներով։ Ահաւասիկ Էրազմոսի ուշադրած կէտերը որոնք իրաւամբ արժանի են կարեւորութեան։

Ռապլէ (1483—1553) ուրիշ դաստիարակ մը, նախորդէն աւելի լուսաւորուած, եւ թերեւս աւելի ծառայած է դպրոցական խնդիրին։ Այս մտքին համար, անցեալը իր բոլոր գաղափարներովը անհետացած էր, մինչ Էրազմոսի վրայ Սքոլաստիկ դպրոցի ստուերները դեռ կը տատանէին։ Միջնադարեան ձեւականութիւններուն արմատապէս հակառակ, իրականութիւնը կը սիրէր. կ'ուսուցանէր եւ կը փնտռէր։ Երբ բնութեան զաւակ միտքը բնութեանէն անջատուելու համար դեռ վանդակուած էր, ինք այդ վանդակին փեղկերը բանալով հրաւէր կարդաց անոր դուրս գալ եւ ծառին ու ծաղկին, ցօղին ու շողին, սարին ու քարին, ջուրին ու հուրին, ամպին ու շանթին, երկրին ու երկինքին, մարդուն ու մանուկին մօտենալ, դիտել ու սերտել զանոնք, խաղալ եւ զբօսնուլ անոնց հետ։ Ներկայ մանկավարժական մեթոտներուն, աստիճանաւ մը հիմնադիրը եղաւ։ Աշակերտաց ուսուցանելու ատեն, առարկայական դասերով անոնց մտքերը կը շահագրգռէր

եւ կ'արթնցնէր: Ֆիզիքական մարզանքներու մեծ տեղ կուտար: Մանուկը բարոյապէս բարձրացնելու համար կրօնական ուսուցումներու լուրջ հսկողութիւն կ'ընէր. սոսկ բարոյիկ խրատներ բաւական չէր սեպեր: Կրօնը արմատացնել կ'աշխատէր տղուն մէջ, գայն Աստուծոյ հետ կապել ջանալով: Հոս փակագծով մը չեմ կրնար սա հարցը չընել մեր ժողովրդեան դպրոցավարներուն. երեք ու կէս դար առաջ երբ մարդիկ վերոյիշուած ըմբռնումներ յղացած, ծնած ու գործադրած են, դուք ինչպէս կը վարէք այսօր մեր դպրոցները:

Կուգանք այս ժամանակի էն մեծ վարպետին, Մօնթէյնի(1533-1592) որուն շատ բան կը պարտի ներկայ դաստիարակութիւնը, Մօնթէյն ինքնատիպ միտք մը կը կրէր, որուն համար իմացական հորիզոնը շատ լայնցուց. տեսութիւնները ազատ ասպարէզ գտան թեւածելու: Վերլուծելով մարդկային բանավարութիւնը, նշմարեց հոն տիրող կարողութիւններուն մէջ բնածին աստիճանաւորումներ եւ ուստի թոյլ չտուաւ ամէն մտքի՝ ամէն ուսման հպելու, մինչ Ռապրէ կը թելադրէր ուսանողը սորվիլ ինչ որ պատահի: Մօնթէյն իր խտրողական սկզբունքը կը քարոզէր եւ կ'ամփոփէր սա նախադասութեան մէջ. « Լաւ շինուած գլուխ մը աւելի արժէքաւոր է քան լաւ լեցուած գլուխ մը », որ կը յիշեցնէ մեզ Պլուտարքոսը: Յիշողութեան ամբարը լեցնելու եւ դիզելու բոլորովին հակառակ, ըմբռնողութիւնն ու գիտակցութիւնը ճոխացնել ու զօրացնել կը ջանար: Իր տուած կրթութեան նպատակն էր, տղան աւելի խոհմ ու դատողութիւնը աւելի ուժեղ ընել, իմաստակ ուսուցիչներու վրայ խօսած ատեն կ'ըսէ թէ « ինչպէս որ թռչուններ անդիէն ասդիէն հատիկներ հաւաքելով կը բերեն ու ձագերուն բերանները կը ձգեն, նոյնը կ'ընեն շատ մը դասատուներ սոսկ գրքերու մէջէն բաներ մը ժողովելով ու թափելով աշակերտին գանկին մէջ: Մօնթէյն՝ գործնական եւ օգտական դպրոցին հարազատ գաւակն էր: Կ'ուսուցանէր դրականապէս ինչ որ օգտակար էր: Բնագանցական մտաճոհումներ մոռտ չէին գտնէր իր դասարաններէն ներս: « Փիլիսոփայութիւնը այն է որ մեզ ապրիլ կը սորվեցնէ » կ'ըսէր: Դասատուութեան մէջ դասագրքի չէր կապուէր եւ ոչ ալ ուսանողը գերի կ'ընէր անոր, այլ դիտողական ու թելադրական եղանակներով կ'աշխատէր տղուն հետաքրքրութիւնը արթնցնել: Անոնք որ դասագրքին կապուած էին, դանոնք դասագրական (bookish) կոչելով կ'այպանէր « Իրերը՝ խօսքերը կանխելու են » կը քարոզէր, որով Ռապրէի առարկայական մեթոտը աւելի ուժով յառաջ կը տանէր: Ընթերցասէր աշակերտները քաջալերելու համար կը նմանցնէր ընթերցանութիւնը՝ մեղուին ծաղկէ ծաղիկ թռուրտութիւն, որով թէեւ շատ փանաքի հիւթեր կը ժողվէ բայց քիչ վերջ քաղցրահամ մեղրահացը կը պատրաստէ: Այս գործնական բացատրութեամբ կ'ըսէր թէ ամէն գիրք քաղցր հիւթ չունի, ինչպէս ամէն ծաղիկ, թէ գիրքերու մէջ շատ քիչ հիւթ կայ ինչպէս ծաղիկներուն, եւ թէ ընթերցողին նպատակը այդ հիւթը ծծել եւ մեղրախորիսի չիսել ըլլալու է եւ չէ թէ ծաղկին փափկիկ թերթերուն մէջ օրօրուելու նման,

գրքին թերթերուն մէջ թափառիլ: Դպրոցավարութեան մէջ խստութիւնն ու պատիժը հաշտ չէին իրարու հետ. կարելի եղածին չափ մեղմութիւնը և ազատութիւնը կը գործածէր, վարելու և դաստիարակելու իբր արդիւնաւոր միջոցներ: Գաղաքակրթութեան եւ ընկերութեան միտքը զբաղեցնողը, միայն մանուկ սերունդին կրթական խնդիրը ըլլալու է, կ'ըսէր: Մօնթէյն՝ հակառակ իր այս օգտաւէտ յղացումներուն, կնոջ դաստիարակութեան գաղափարին համերաշխ չէր, անհաշտութիւն մը որ կրթիչ վարպետի մը համարաւին վրայ աղտ մը կը ձգէ: Իր ժամանակը մեծ ընդունելութիւն ըրաւ. բայց այս օրը օգտուած է իրմէ: Վերածնութեան դարի առ եւ ասոնց նման կրթիչ մշակներու ջանքերը եւ արդիւնքները լմբռնելու համար գէշ չըլլար եթէ քանի մը խօսքով զուգադրաբար փոփոխութիւնները ուրուագծենք: Խիստ եւ կոշտ դպրոցավարութեան յաջորդեց բարերազդաբար աւելի մեղմ ու մարդավայել մեթոտներ: Գանկահամբար ուսուցումը տեղի տուաւ մտամշակումին: Դաստիարակութեան՝ գործնական զբաղում մը ըլլալու լմբռնումին տիրապետեց զարգացման գաղափարը: Վարդապետական ու ցուցական հրահանգումները ջնջուելով, անոնց տեղ անցան ազատական և իմացական մտամարզումները, բնական առարկաներու միջոցաւ, իր չափազանցութեան գացած բարոյական եւ կրօնական մոլեռանդ դաստիարակութիւնը սկսաւ բնական հակազդեցութեամբ մը աշխարային հանգամանգն առնել: Ազատ խուզարկումի ոգին տենդոտ տիրում մը ունեցաւ հեղինակութեան վրայ հիմնուած կրթութեան: Վերջապէս այս դարը՝ նախորդ միջին դարերու հակաշարժումն էր, որուն մէջ չափազանցութիւնը նախկին պիլի ու ձիգ կաշկանդումներուն ծնվւնդն էր:

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՎԷՊ

ԱՆԴՈՒՆԴԻՆ ՄԷՋ

(Շարունակութիւն 13րդ Թիւէն եւ վերջ)

« Ի վերջոյ անդունդներու այս անծանօթ բնակիչը աչքերը թարթեց ու բացաւ՝ ձեռքը լուսարգելի մը պէս դէմը բռնելով. բերանը խոշոր բացաւ եւ մարդու ձայնին պէս աղաղակ մը արձակեց որ մինչեւ գունտին մէջ թափանցեց. ի՞նչպէս առանց թոք ունենալու ձայն կարելի է հանել. էլսթէտ ասոր վրայ չմտածեց բնաւ: Մարդանման արարածը կորսուեցաւ մուկին մէջ և էլսթէտ աւելի զգաց քան թէ տեսաւ անոր դէպի գունտը յառաջանալը: Վստահ ըլլալով որ զայն իրեն ձգողը լոյսն է՝ ելեքտրական հոսանքը ընդհատեց: Պահ մը ետքը պողպատին վրայ տրուած հարուածներու խուլ աղմուկը լսուեցաւ և գունտը սկսաւ տատանիլ:

« Զայնը նորէն կրկնուեցաւ : եւ էլսթէտի այնպէս եկաւ թէ հեռաւոր արձագանք մը անոր պատասխան կուտայ : Հարուածները նորէն սկսան եւ գունտը կը տատանէր : էլսթէտ՝ խաւարին մէջ կը ջանար բան մը տեսնել : երբ հեռուէն նշմարեց փոսփորափայլ եւ կէս մարդկային ձեւեր որոնք դէպի իրեն կ'աճապարէին :



Բնապարար երեքորական լապտերին կոճակը փնտռեց եւ դիպուածով՝ գունտին ներսը լուսաւորող պզտիկ լամբարը վառեց : Գունտը ինքն իր վրայ դարձաւ եւ էլսթէտ վառ գլորեցաւ : Զարմանքի բացադանչութեան նմանող աղաղակներ լսեց եւ երբ ոտքի ելաւ՝ երկու ուղադիր աչքեր զինքը կը դիտէին պատուհանէն :

« Միեւնոյն ժամանակ, գունտին վրայ տրուած հարուածները

կը շարունակէին, և . . . սոսկալի՝ բան . . . զգաց որ զսպանա-
խտոր շարժումին գործիքները ծածկող տուփին վրայ կրկնակի
հարուածներ կ'իջնան: Այդ պահուն զգացած անձկութիւնը ան-
նկարագրելի է. եթէ այդ շարժումը կանգ առնէր, իր կորուստը
անվիճելի կը դառնար: Գունտը լուսաւորող լամպարը մարեց եւ
դուրսի մեծ լապտերը վառեց: Ովկէանոսին ցեխալից յատակն ու
մարդանման արարածները անյայտացեր էին: Գունտը կը շարժէր:
Այնպէս կարծեց թէ կապարի ծանրութիւնները կապող չուանը
խզտուած է եւ գունտը վեր ելլել կ'սկսի: Իրաւ ալ բաւական
ժամանակ բարձրացաւ, բայց յանկարծ պօրաւոր ցնցումով մը
կանգ առաւ:

«Հիմայ, հորիզոնական ուղղութիւնով մը կը յառաջանար
գունտը, դանդաղօրէն, ինքն իր վրայ դառնալով: Պարապ տեղը
էլսդէտ պատուհանէն դուրս բան մը տեսնել կը ջանար: Մտածեց
լապտերը մարել՝ դուրսը անցած դարձածը աւելի լաւ նշմարելու
համար: Իրաւ ալ ջուրերուն ցոլացիկ մթութեանը մէջ՝ ամառ-
ուան աստեղազարդ գիշերուան մը պէս՝ չուքեր տեսաւ, որ իրմէ
վար կը շարժուէին. անշուշտ տարօրինակ արարածները չուանը
կտրելով, գունտը ծովուն յատակն ի վեր տեղ մը կը քշէին:

«... Ընդժովեայ դաշտին ծփծփումներէն անդին, տարտամ
ու հեռաւոր, ընդարձակ հորիզոն մը նշմարեց՝ լուսաւորուած տմոյն
ճառագայթումով մը: Դէպի այդ հորիզոնը կը քշուէր իր գունտը
նման օդապարիկի մը զոր դաշտին մէջէն դէպի գիւղ մը կը տա-
նին: Ժամը գրեթէ հինգն էր երբ հասաւ այդ լուսաւորուած մի-
ջավայրը. տեսակ մը քաղաք հիմնուած էր հոն, իր փողոցնե-
րովը, առանց տանիքի տուներովը, որու մէջտեղը կը գտնուէր
միւսներէն շատ աւելի ընդարձակ շէնք մը՝ նոյնպէս առանց տա-
նիքի. բոլոր այս շէնքերը կառուցուած էին փոսփորափայլ ոս-
կորներով: Գունտը անհամար բազուկներէ քաշուելով դէպի այդ
կեդրոնը գտնուած մեծ շէնքին վրայ կը յառաջանար:

«Հիմայ գունտը կը հանգչէր նաւու մը բեկորներէն շին-
ուած տեսակ մը բարձրաւանդակի վրայ, որու չորս կողմերէն
վար կախուած էին շղթաներ, ուրիշ զանազան առարկաներ՝ ըն-
կըղմած նաւու մը մնացորդները զորս ընդժովեայ բնակիչները
հաւաքած էին իբր իրենց ջրային մթնոլորտին բարձրերէն թա-
փած երկնաքարեր:

«Գունտին դիմացը հազարաւոր արարածներ շարուած էին:
էլսթէտ դիտեց որ բոլորն ալ ծունր կը դնէին եւ անոնց բերնի
շարժումներէն յայտնի էր որ նորօրինակ սաղմոսերգութիւնով մը

փառաբանութիւններ կը կարգային : . . .

« Սակայն վայրկեանները կ'անցնէին . էլսթէտ սոսկումով տեսաւ որ չորս ժամ հազիւ բաւելու չափ թթուածին կրնայ արտադրել գործին : Եւ պաշտամունքը կը շարունակուէր անդադար , իբր թէ թշուառին դամբանական արարողութիւնը եղած ըլլար ան :

« Ինչպէս ազատիլը ինք ալ չէր գիտեր , միայն գունտին կապուած չուանին կտրուածքէն յայտնի կ'ըլլար որ տարօրինակ չէնքին եզերքին շփուելով ի վերջոյ կտրուած էր :

« Գունտը ահագին ուստում մը ըրած եւ վեր ելլել սկսած էր , տարօրինակ Համբարձումի մը երեւոյթը ընծայելով իր երկրպագուներուն : Ելլելու ժամանակ գունտին արագութիւնը շատ աւելի եղաւ քան իջնելու պահուն : Մետաղեայ պատեանը շուտով տաքացաւ . . . էլսթէտ զգաց որ ամէն բան իր շուրջը կը դառնայ . . . եւ ինքզինքը կորսնցուց : Երբ ուշաբերեցաւ , նաւուն մէջն էր՝ անկողինին մէջ պառկած » :

Ահա այս է համառօտ պատմութիւնը զոր էլսթէտ ըրաւ իր ճամբու ընկերներուն . թէեւ մտադրութիւն յայտնեց զատ հատորի մը մէջ ամփոփելու այս տարօրինակ ճամբորդութեան արկածները՝ սակայն աւելի իր գործիքը կատարելագործելու զբաղելով մոռացութեան տուաւ այս կէտը :

1896 փետրուար 2ին , երկրորդ փորձ մը կատարեց , աւելի կատարելագործեալ գունտի մը մէջ փակուած , սակայն դժբաղդաբար չկրցանք իմանալ արդիւնքը , որովհետեւ էլսթէտ ովկէանոսին անդունդներուն հիւրը մնաց : Տասներեք օրեր՝ զինքը ծովը ձգող նաւը փնտռեց զայն , ի վերջոյ յուսահատ դարձաւ Ռիօ , դժբաղդ խուզարկուին բարեկամներուն իմաց տալու այս գոյժը :

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Մ Ա Յ Ր Ի Վ Ի Ն Գ Ի Բ Ն Ը


Երբ պզտիկ եի , մասդաշ , վարդերես ,
Մայրիկին կուրծքին փառած ամեն օր ,
Անսարքերութեամբ վայելի լես ,
Անուշիկ կաթն ու ֆաղցրիկ օրօր :

Ես գիտեի քե աշխարհը համակ
Մայրիկին երկու ստիկն եւ միայն ,
Կաթը՝ սրնունդըս ու յաւե իր տափ
Գիրկը՝ անկողիկն փափուկ , աննըման :

Մեծցայ, կրեցին կաթեն զիս խալառ,
 Մայրիկին զիրկը պզտիկ վահեհի
 Տափուկ ու փափուկ անկողին կ'ըլլար,
 Ա՛ն պզտիկ եր, ե՛ս մեծ զրդայ եի:
 Կը նախանձեի պզտիկ մանուկին,
 Եւ պզտիկ մընայ կ'ուզեի յաւեհ,
 Ու չընեռանայ մայրիկես անգին
 Ապրելու համար ո՛հ, միշտ անոր հետ:
 Բայց կը մեծնայի տխուր ու տրտում
 Հեռու մայրիկիս տափ գրկեն ճեմոյշ:
 Եւ հառաչանքով յիշեի սիրուն
 Մանուկ օրերս որ անցան անփուշ:
 Ո՛հ. քոչուններու կակուղ փետուրով՝
 Զիս պառկեցուցին անկողինի մեջ:
 Կարծր եր անկողինս ու մայրիկիս քով
 Թըռեի յաւեհ սիրով մը անշեփ:
 Գուրգուրանքներով մեծցրեցին զիս:
 Համբոյրներով ալ նախաս օծեցին:
 Մայրիկիս երթայ կը տեղար հոգիս,
 Ու հանգչի կ'ուզեի վերայ իր կուրծքին:
 Համբոյր, գուրգուրանք, սէր ու ամեն բան,
 Գեղծիքով շաղուած գրսայ՝ ամեն տեղ,
 Մայրիկիս սերը անկեղծ եր միայն,
 Եւ անոր սիրտը սուրբ ու սիրազեղ:

Հիւսէյնիկ

ՄԱՆՆԻՕՆ



ԲԱՂԴՆ ԱԼ ՊԷՏՔ Է ՈՐ ԺՊՏԻ

Յետին աստիճան աղքատ՝ ծեր մէկը կար, որուն օրերը գրեթէ չոր հացի կտորուանքներ ուտելով կ'անցնէին, իր ճակատագրէն գանգատելէ զատ ոչինչ կրնար ընել: Օր մը մինչեւ իրիկուն շուկաները պտտելէ յետոյ, իր տեղը դարձաւ. բան մը չունէր ուտելու: Այս դաժան կեանքէն զգուած, գնաց կծկուեցաւ անկիւն մը, ուր շատ մը խորհուրդներ գլխուն մէջ դարձնելէ վերջ որոշեց որ հետեւեալ օրը գիւղին ամէնէն հարուստ վաճառականին դիմում մը ընէ, գոնէ ան իր վիճակին սաստկութիւնը իմանալով

բան մը շնորհէ։ Այս ծրագրին այնչափ հաւնեցաւ որ, նստած անկիւնը անուշ երազներով քուն մը քաշեց։

Երբ առտու եղաւ, ելաւ վաճառականին գնաց. մարդը որ իրաւամբ զթափախ մէկն էր, չուզեց իրեն դիմող աղքատը յուսախափ ընել։ Ծառաներէն մէկուն հրամայեց որ. սադ մը մորթելով փորը սսիկ լեցնեն ու բարակ թելով կարելէ՝ յետոյ անոր տան։ Աղքատը երթալու ատեն կ'ըսէր ինքնիրեն. « Ես սադ մը ուտելու չափ հարուստ չեմ », և թէ անոր ծանրութենէն հետեւցուց թէ սագին փորը պարպուած չէր, ուստի պէտք էր փորն ալ մաքրել, և թէ հաց ալ չունէր, ուստի յարմար դատեց ծախել։ Երբ այս խորհուրդներով միտքը կ'օրօրուէր, յանկարծ մէկը եկաւ, հարցնելու թէ սագը կը ծախէ՞ր. վայրկեանին հաստատական պատասխան տրուեցաւ, վեց դահեկանի սակարկեցին, և մարդը ստակը տալով սագն առաւ ու գնաց։

Հետեւեալ օրը երբ սագը գնողը՝ աղքատը տեսաւ, մտերմաբար անոր մօտեցաւ ըսելու համար որ, եթէ ուրիշ ատեն ալ ձեռքը սագ անցնի, շիտակ իրեն բերէ, որովհետեւ կ'ըսէր. չատ կը սիրեմ սագի միսը, և կ'աւելցնէր թէ այս անգամ քանի մը փարայ տլ աւելի կը վճարէ։

Քանի մը օր անցնելէն ետքը, աղքատը նորէն իր բարերարին գնաց, հազար օրհնենքներ ու մաղթանքներ շնայլելով։ Վաճառականը նախորդ ընթացքը բռնեց։ Աղքատը այս անգամ ալ շիտակ առջի սագը գնողին գնաց, մարդը վեցի տեղ ութը դահեկան տուաւ, երկու դահեկանը իրր նուէր իր խոստմնապահութեան, եւ պատուիրեց որ եթէ ուրիշ տնայիններ ալ այսպիսի բան մը ձեռք անցնէ, շնորհակալ իրեն բերել, որովհետեւ սագին միսէն չատ կ'սիրործի։ Մեր աղքատ մարդուկը դիմացինը խափած կարծելու միտմտութիւնով ուրախ զուարթ մեկնեցաւ։

Երկու երեք օրէն, սագին արժէքը եղող դրամը՝ չսպառելով, պապուկը մտադրեց երրորդ դիմում մը ընել. բայց այս անգամ բարերարը սրտնեղեցաւ, քովը կանչեց մուրացկանը և խոթող գէմքով մը հարցուց թէ առջի տուած երկու սագերը ի՞նչ ըրեր էր։ Համբերութեամբ աղքատին պատմութիւնը մտիկ ընելէ ետքը ըսաւ. « Քանի որ Աստուած քեզի չէ տուեր, անոր ստուերը չարժող մարդը ի՞նչ կրնայ ընել » ու ճամբեց զայն։

ԾԱՊԻՆԵՐՈՒ

ԼԵԶՈՒՆ

Ա.

Աղաւնի (Միգէ չիչի, Verveine). Մախուր սեր, կորով. Կապոյտ ծաղիկներով պզտիկ բոյս մը՝ որ կ'աճի անտառներուն մէջ եւ ցանկապատներուն քով: Հին Հռովմայեցիներուն եւ Կոլլուացիներուն համար կրօնական արարողութիւններու մէջ աղանիճը նուիրական բոյս մը կը համարուէր: Գիրմանիոյ քանի մը գաւառներու մէջ, դեռատի ամուսնացեալները կը պսակեն տակաւին այդ բոյսով, անշուշտ ի յիշատակ Վենիսի, եւ զանոնք այս զիցուհիին պատգանովեան տակ դնելու համար:

ՄԱՐԳԱՐՏԱՄԱՂԱԿՆ ՈՒ ԱՂԱՌՆԻՃԷ

Սէնթ Օրորթիւն հրապարակին չըջականերէն ասուի վաճառական մը՝ Պ. Պէնարի որդին, նստած էր իր պարտիզպան Սիմոնի դիմացը: Պ. Պէնար տգէտ Բարիզցի մըն էր, եւ ամէն օր կը կարդար Շարիվարին. ինչ որ զանի առաջնորդած էր սկեպտիկութեան:

Առանց խռովելու Պէնարի ծաղրալից դէմքէն, Սիմոն թրօէն, բազուկը առաջ երկարած, մատովը կը ցուցնէր երկու սիրուն ծաղիկներ՝ որոնց ցօղունները մեղմիկ կ'օրօրուէին յունիսի գաղջ գեփիւռէն: Եւ տաքութիւնով կ'ըսէր.

— Այո՛, պարո՛ն Պէնար, այո՛, տասնեւհինգ օր չի քլած ձեր աչքերովը պիտի տեսնէք. . . եթէ աղանիճը թողուք այս մարգարտածաղիկին քով, աղանիճը պիտի կորսուի. այո՛, խեղճ միւնիսի ծաղիկը պիտի կորնչի՝ նախանձէն.

— Նախանձէ՛ն. . . ըսաւ վաճառականը ծաղրալից ժպտով մը:

— Նախանձէ՛ն, Յիսուս Քրիստոս Երբ ձեզի կը կրկնեմ որ ասիկա իրողութիւն մըն է, ճշմարիտ իրողութիւն մը. վերջապէս Բարիզ ունի գիտուններ եւ. . . :

— Չե՛մ հաւատար գիտուններուն, ըսաւ Պ. Պէնար:

— Բայց Սո՛ւրբ Կոյս, յարեց Սիմոն, տեսա՛ժ եմ տեսա՛ժ. նոյն իսկ ե՛ս, այս ծաղիկներով՝ որ հոտ են, ի՞նչ կը պատասխանէք, Պ. Պէնար:

— Թէ՛ դուն տեսած ես:

— Օ՛հ, օ՛հ, օ՛հ, պօռաց Սիմոն չկրնալով ինքզինքը՝ զսպել՝ անհամբերութենէն ոտքը գետինը գարնելէ, հակառակ իր տիրոջ հանդէպ ունեցած յարգանքին, Օ՛հ, եթէ ձեզի պատուէի՛:

— Պատուէ՛, ըսաւ վաճառականը, մենք Բարիզցիներ ըլլալով՝ շատ անհաւատ ենք, միմիայն յեղաշրջումներու կը հաւատասք:

Սիմոն թոյլատրութեամբ ըլլալով, ճարտասանական դիրք մը առնելով՝ այսպէս սկսաւ:

— Տեսէ՛ք, պարոն Պէնար, գրեթէ քսան տարեկան էի: Երկու տարիէ ի վեր կը սկսէր խօսուիլ վրաս Օրշիայի մէջ՝ ուր ծնած եմ, անոր համար որ, առանց պարծենալու, շատ քիչ կը գտնուէր տղայ մը՝ որ ինծի չափ սիրով յարի ծաղիկներուն: Անոր համար չէ որ օրը քառասուն սու կը վաստկէի՝ առտուան ժամը երեքէն ի վեր փորելով, գէշ խոտերը հանելով, տերեւները շտկելով եւ ուռգելով մեր պարտէզին ծաղիկները: Անոր համար որ՝ երջանիկ էի ծաղիկներու հետ: Եւ արդարեւ, Պարոն Պէնար. ձեզի կը հարցընեմ թէ աշխարհի մէջ կա՞յ բան մը աւելի սիրուն՝ քան այս փոքր խաղալիքները բարի Աստուծոյն, որ այնպէս կը թուի թէ՛ ստեղծած է զանոնք՝ գուարթացնելու համար բարի ու արդար հոգիներու աչքն ու սիրտը:

Արդ, օր մը ելլե կեցած էի մարդարտածաղիկի մը եւ աղանձի մը առջեւ, ճշտիւ՝ քոյրեր իրարու, պարոն Պէնար, հայրս քովս եկաւ եւ ըսաւ ինծի. « Սիւն, դուն քսան տարեկան ես, տղաս. կ'ուզեմ քեզ ամուսնացիլ: — Շատ լաւ, հայր իմ, պատասխանեցի յենացուպ մը տնկելով մարգարտածաղիկիս քով, որովհետեւ անիկա ծաղիկներու այնպէս առատութիւն մը կը խոտանար որ՝ լա՛ւ կը տեսնէի թէ զանոնք չպիտի կրնար կրել: — Մտի՛կ րբէ, յարեց հայրս. մեր տունին դէմը երկու սիրուն աղջիկներ կան՝ պատուաւորութիւնն եւ իմաստութիւնն են ինքնին: Մէկը Լուիզն է, միւսը Աննէթը, ո՞րը կը նախընտրես, գաւա՛կս: — Ան՝ գուր դուք կը նախընտրէք, պատասխանեցի անհամբերութեան շարժումով մը. որովհետեւ մարգարտածաղիկիս յենացուպը խորը խոթելով պիտի կոտորէի զանի: — Բայց, յարեց հայրս, միայն քեզի կը վերաբերի ընտրութիւնը. Վաղը՝ կիրակի, պիտի եռթանք տերերայարկը (feuillée), դուն պիտի պարես այս բարի աղջիկներուն հետ, եւ իսկոյն ինծի պիտի ըսես թէ որո՞ւն հաւնեցար: — Լա՛ւ, ըսի քանի մը կաթիլ ջուր նետելով աղանձիս. որովհետեւ երկինքը այդ օր բոցավառ էր, յաջորդ աստու քանի մը չիթ եթէ ուզելու ըլլար անկէ, միայն արցունք մը պիտի ունենար. խեղճ փոքրիկը:

Յաջորդ օրը, իրիկունը պարէն դառնալով, հայրս գաւաթ մը գարեջուր պարպեց եւ ըսաւ. « Է՛հ, լա՛ւ... »:

— Արդարեւ... հայր իմ, չեմ գիտեր, Աննէթ եւ Լուիզ ինծի հաւասարապէս երկու քաջ աղջիկներ կը թուին:

— Գրո՞ղը տանի, ըսաւ ձեր թրօն. բայց դուն չես կրնար երկուքին հետն ալ ամուսնանալ. պէտք է ընտրութիւն մը ընել:

— Ա՛հ. հայր, եթէ վարդի մը եւ տահիլայի մը միջեւ վճիռ մը արձակել պէտք ըլլար, դժուարութենէն պիտի կրնայի պրծիլ, բայց երկու կիներու միջեւ, ի՞նչ տարբերութիւն կրնայ կենալ: Ձեզի կը կրկնեմ թէ՛ կը փափաքիմ որ դուք ընտրէք. — Ո՛չ, յարեց հայրս. ասիկա պէտք է քեզմէ ըլլայ, եւ ժամանակին հետ պէտք է գայ անիկա: Սպասելով, եւ որովհետեւ դուն տակաւին չես գիտեր թէ ո՞րը նախընտրես, պէտք է զանոնք երկուքն ալ լաւ պատրաստել:

Եւ առանց իմ պատասխանիս սպասելու, իմ ձեր մարդուկս առաւ իր բահը, չորս անգամ փորեց հողը, կապոյտ ֆայիանսէ սի-

րուն ամանի մը մօտեցաւ և հոն դրաւ իմ սիրուն մարգարտածաղիկս. ապա ասիկա ընելէն ետք, գործողութեան սկսաւ աղաւնիձին համար, եւ զիս ժպտուն դիտելով՝ ըսաւ.

— Անոնց սալ, ասոնք, մարգարտածաղիկը Լուիզին, աղաւնիձը Անէթին:

— Օ՛հ, ըրի սիրտս սեղմուած, տա՛լ իմ մարգարտածաղիկս և աղաւնիձս: Անոր համար որ, գիտէ՞ք Պարոն Պէնար, գաւառին մէջ Օրշիայէն մինչեւ Լիլ եւ Տուէ չիկար անոնց նմանը: Թէպէտ եւ տասը լիպրա սերմ ցանած էի, մինչեւ որ այդ երկու գանձերը ստացայ: Ահաւասիկ ինչպէ՛ս է բնութիւնը. ան կը դիտէ իր աշխատիլը, տարիներով տանջուիլը, թափթփուք արգիւնք մը առաջ բերելու համար, եւ ապա դեղեցիկ օր մըն ալ կը սկսի ըսել. « Եւ սակայն պէտք է վարձատրել այս քաջ մարդը: » Այն ատեն անիկա մեզի կը զրկէ հրաշագեղ գոյներով այս ծաղիկները, հազուագիւտ, նուրբ, փափուկ, լեցունիկէկ ցօղունով, բեզուն, նրբակերտ. վերջապէս ուրիշ խօսքով, այն բոյսերէն՝ որոնց առջեւ եթէ կենաս, գուարթութեան եւ հիացումի աղաղակ մը կ'արձակես: Եւ հայրս կ'ուզէր զիս զատել իմ մարգարտածաղիկէս եւ աղաւնիձէս:

Բայց հայրս չար ծերուկ մըն էր, եւ հակառակ երկու խոշոր արցունքի կաթիլներուն՝ որոնց աչքերէս հոսիլը կը տեսնէր, այնչափ կառչած էր իր գաղափարին, որ՝ երկու ժամ ետքը մէկը Լուիզի եւ միւսն ալ Աննէթի պատուհաններուն առջեւն էր, երկու ոտք իրարմէ հեռու: Անոնք տակաւին կրնային իրար տեսնել եւ միասին խօսիլ, այս երկու սէրերը:

Ասիկա կ'ըսեմ. որովհետեւ չէք գիտեր թէ անոնք պիտի սկըսէին նախանձիլ իրարու, այս խեղճ պզտիկները:

Յաջորդ կիրակի, հայրս նորէն պարպեց իր գարեջուրի գաւաթը եւ առջի կիրակիին պէս ըսաւ « Է՛հ, լաւ... »:

— Է՛հ, լաւ, հայր, միշտ այնպէս. Լուիզ եւ Աննէթ երկու աղջիկներ են հաճելի, թարմ՝ աղբիւրի զատկածաղիկներուն պէս, եւ սատանան տանի, եթէ համարձակիմ ըսելու թէ՛ մին ինծի համար լաւ է քան միւսը: Դարձեալ կ'ըսեմ, ինչո՞ւ ինծի չէք օգներ որոշում մը տալու համար:

— Որովհետեւ չեմ ուզեր ապագայ երջանկութեանդ պատասխանատուութիւնը ստանձնել:

Բայց, ինչպէս ըսի, անիկա չար ծերուկ մըն էր: Ձի կրնայով վրաս ազդել, անուղղակի ձեւեր մը կը բանեցնէր որ Լուիզի մասին որոշում մը տամ: Ան՝ Լուիզը որոշած էր, անոր հետ շատ անգամ գտնուած էր. հայրս վերջապէս այնչափ շատախօսած էր որ խեղճ աղջիկը կ'երեւակայէր թէ զինքը Աննէթէն պիտի նախընտրէի. եւ բանն այն էր որ ես միայն մարգարտածաղիկիս եւ աղաւնիձիս վրայ կը խորհէի:

Որովհետեւ պէտք չէ՛ կարծել որ զանոնք մոռցած էի, պարոն Պէնար, գացէ՛ք... ո՛չ... ո՛չ... Ամէն օր պարտէզ երթալով կը կենայի մեր տունին առջեւ. եւ տասը վայրկեանի չափ անոնց կը նայէի խանդաղատանքով այն պատուհանին վրայ՝ ուր անոնք դրուած էին: Եթէ այն ատեն ինծի ըսուէր թէ տունը կը վառէր՝

վստահ եղէք թէ աչքերս անգամ չպիտի դարձնէի: Երեք շաբաթ սքանչացայ. իմ ծաղիկներս կը ներկայանային իբր հմայք մը. տերեւները կը վերջաւորուէին հրաշապէս, կոկոնները կը բացուէին առատութիւնով, կը տեսնուէր որ հոն կար առողջութիւն, կեանք՝ յաւիտենականութեան համար...: Իսկոյն, երկուշաբթի օր մըն էր, բնաւ չպիտի մոռնամ, նոյն իսկ առջի օրը Լուիզի հետ Աննէթէ երկու անգամ աւելի պարած էի. հայրս, որ միշտ գաղտնի իր գաղափարը առաջ կը քչէր. ինծի ըսած էր որ Աննէթ մէկ կողմ դրած էի. աղէկ որ ասիկա չեղաւ: — Այս երկուշաբթի սովորականին պէս նայեցայ մարգարտածաղիկիս. անիկա առողջութիւն կը ճառագայթէր. բայց Աննէթի աղաւնի՛ճը... օ՛հ, Աստուած իմ, պարոն Պէնար. պէտք չկար խաբուելու: Ան հիւանդացեր էր: Այդէն շատ մը տերեւներ ցօղունին երկայնքն ի ըստ կը կախուէին գալարուելով, և քանի մը ծաղիկներ կը ծռէին ու կը տփգունէին, փոխանակ նորագարթ արեւին դէմ փայլելու ուղղաձիգ ու սաղարթախիտ՝ ինչպէս երբեմն:

Ձեզի կը հարցնեմ թէ ինչպէ՛ս բռնուեցայ: Բայց ի՞նչ ընել. առտուան ժամը երեքն էր: Ձէի կրնար Աննէթը արթնցնել: Ուրիշ կողմէ՛ սպասելն ալ անկարելի էր: Դրացիի մը պարտէզը քամէլիաներ տնկած էի և աւելի պիտի ուզէի մեռնիլ քան զանոնք անխնամ թողուլ. Անորոշութեան և անձկութեան քառորդ ժամէ մը ետք, պէտք եղաւ մեկնիլ, և զիս մխիթարելու համար, ես ինքնիրենս կ'ըսէի՝ քալելով. «Ծանր չկրնար ըլլալ այն, միայն կաթիլ մը ջուր և քիչ մը փտահող կ'ուզէ. արդ, Աննէթ, աղջիկներու ամէնէն ուշադիրը և խնամուար, չարիքը պիտի նշմարէ եւ պիտի դարմանէ զանի:»

Ո՛հ, ինչպէ՞ս կը խաբուինք: Յաջորդ օրը աւելի գէշ էր ան. ակներեւ էր որ հիւանդութիւնը կը յառաջանար. միւս օրը նոր տերեւներ ու ծաղիկներ հիւանդ. վերջապէս մինչեւ կիրակի զարհուրելի յառաջդիմում: Թէեւ վստահ՝ Աննէթի խնամքներուն վրայ պիտի ուզէի սակայն անոր հետ խօսիլ. բայց պէտք էր առտուան ժամը երեքին մեկնիլ և գիշերը միայն վերադառնալ, երբ ամէն մարդ պառկած էր: Վերջապէս կիրակին եկաւ: Եւ եթէ յարատեւ խնամք տանէր, ինչպէս պիտի ընէր պատուաւոր աղջիկ մը, իրիկունը անիկա պարատեղին պիտի տեսնէի:

Արդարեւ, հազիւ թէ հասած էինք տերեւայարէին տակ, երկու աչքովս կը փնտռէի Աննէթը, և զանիկա նշմարեցի՝ սալոնին ծայրը. հո՛ն կը վազէի, երբ հայրս իմ ձեռքս Լուիզի ձեռքին մէջ դրաւ, և քառախաղ մը խաղալ տուաւ. Լուիզը թողուլ՝ այն ատեն անոր անաբգանք մը պիտի ըլլար. պէտք էր պարել:

Լա՛ւ, ըսի ինքնիրենս, բայց պարէն ետք պիտի վազեմ Աննէթի եւ պիտի հասկնամ թէ ի՞նչ ունի աղաւնիս:

Ա՛հ, Պարսն Պէնար, ի՛նչ ձախորդութիւն. մինչ ես կը պարէի, այնպէս երեւցաւ թէ՛ Աննէթ ինքզինքը անհանգիստ զգաց: Իր մայրը զանիկա տարաւ, այնպէս որ չիկրցայ բառ մը ըսել:

Սակայն ատիկա շատ ստիպողական էր. որովհետեւ արեւածագին, երբ կարելի եղաւ որոշել իրերը, անձկալի ակնարկ մը ձգեցով սէնս եզող ծաղիկին վրայ, չկրցայ վշտի աղաղակ մը զըս-

պել: Բոլոր տերեւները կախուած էին դէպի գետինը, իբրեւ լալկան ուռիի մը տերեւները: Կ'զգայի թէ աւելը ա'լ չէր չընէր, կը գուշակէի թէ խեղճ բոյսը թառամած եւ մեռած էր:

Ի՞նչ ունի, ուրեմն, կը հարցնէի յուսահատ:

Թէեւ աղանիծիս չափ կը սիրէի անոր քոյրը, մարգարտածաղիկը՝ որուն առողջութիւնով փայլիլը կը տեսնէի սանդուղին պատուհանին վրայ. բայց գիտէք, Պարոն Պէնար, թէ մեռնող աղան աւելի կը սիրուի:

Իսկոյն գաղափար մը յղացայ եւ գոչեցի, ո՛չ հողը, ո՛չ ջուրը եւ ո՛չ ալ խնամքները պակասած են անոր, հետեւաբար եթէ ան հիւանդացաւ՝ ասիկա նախանձէն էր: Ան կը նախանձէր մարգարտածաղիկին, կը նախանձէր մարգարտածաղիկին. այսպէս է:

Այս պահուն Աննէթ բացաւ պատուհանը, դժգոյն էր. կը տեսնուէր թէ՛ ան կը տանջուէր տակուին, բայց նուազ իմ աղանիծէս: « Աստուած իմ, Աննէթ ըսի իրեն ցուցնելով. չէ՞ք տեսներ որ այս խեղճ փոքրիկը կը մեռնի: Գլուխով հաստատական նշան մը րրաւ եւ խիստ տխուր դէմքով մը. «Է՛հ, լաւ, յարեցի, անոր յանցանքը ձերը չէ, վստահ եմ, մանաւանդ գիտեմ թէ ասիկա ի՞նչ ունի. ան կը նախանձի իր դրացի մարգարտածաղիկին վրայ: » Աննէթ ինծի չպատասխանեց, այլ՝ սկսաւ լալ: « Օ՛հ, մի՛ վշտանաք, աւելցուցի իսկոյն. գիտեմ թէ յանցանք չունիք, բայց եթէ այդ տեղէն չի հանուի անիկա՝ պիտի կորսուի: Քանի մը օրուան համար զանիկա ինծի տուէք, եւ թող Աստուած յաւիտեան դատապարտէ զիս, եթէ անոր կեանք չիտամ »:

Անիկա առաջ կախուեցաւ եւ ծաղկամանը ինծի կարկառեց. առի զանիկա եւ մեր բակը տարի ու տուի հօրս:

Աղանիծս՝ մարգարտածաղիկին քովէն ելլելէն երեք օր ետքը աւելի՛ փայլուն եղած էր. ուստի հայրս՝ որուն հաղորդած չէի անոր հիւանդութեան վրայի կասկածներս, զանիկա նորէն տուաւ Աննէթի՝ առանց ինծի բան մը հարցնելու:

Եւ ապա, երբ իրիկունը դարձայ, ինծի ըսաւ չարամտօրէն, « Սիմոն, գործդ այս ժամուն կը տեսնեմ: Անշուշտ Լուիզն է որ կը նախընտրես. վերջին կիրակին պարեցիր հետը: — Բայց, հայր իմ, Աննէթ պարը ձգած ըլլալով չէի կրնար... » — Քո՛ւ, քո՛ւ, քո՛ւ. յարեց հայրս, ասիկա պատճառ մը չէ՛, Կ'ըսեմ որ մինակ Լուիզին հետ պարեցիր՝ ուրեմն զանի կը նախընտրես, մտիկ ըրէ՛, զանիկա ընտրած եմ այսօր, պիտի ամուսնանաս ութը օրէն: — Հաճոյքով, պատասխանեցի, որովհետեւ Լուիզ բարի աղջիկ մըն է, եւ վստահ եմ որ զիս երջանիկ պիտի ընէ:

Եւ այն ատեն ինծի հասկցուց թէ ի՞նչ ըրած էր աղանիծին:

Ասիկա զիս հարուածեց: Սակայն իմ մտածումս իրենին պէս չէր չարիքին պատճառին վրայ. որովհետեւ, ինչպէս գիտէք՝ անի չար ձերուկ մըն էր, եւ կը վախնայի իր ծաղրանքներէն. բայց յաջորդ օրէն սկսելով ակներեւութիւնը կատարեալ էր, արդէն աղանիծը կը տժգունէր եւ շաբթուան վերջը, իմ ամուսնութեան օրը ակնարկ մը ձգելով անոր վրայ, տեսայ որ միայն երկու ժամ ունէր ապրելու:

Մինչ իր քոյրը, մարգարտածաղիկը կը պարզէր իր վեհ ու հը-
պարտ երփնագիծերը :

Այս գեղեցիկ օրուան իրիկունը, անիկա փոխադրած էին խըն-
ջոյքին սեղանին վրայ եւ մէջտեղը կը կենար : Լուիզ աջ կողմս
նստած , զանիկա ինծի կը ցուցնէր խնդալով . թէեւ երջանիկ ե-
ղայ այնքան բարի աղջկան մը հետ ամուսնանալու , սիրտս ըե-
ցուն կ'զգայի մտածելով որ աղանիծս թերեւս նոյն ժամուն մե-
ռած էր : Այս վայրկեանին Աննէթէն նամակ մը բերին . ահաւա-
սիկ ինչ որ կ'ըսէր :

« Լ'մնցած է , Պարոն Սիմոն : Երբ դուք կուգա-
յիք , դիտեցի աղանիծս . չօշափեցի իր ցօղունը . տերեւները , ծա-
ղիկները : Ամէ՛նն ալ չոր եւ մեռած էին : Թերեւս պիտի ըսուի
թէ՛ ութ օրէ ի վեր հիւանդ եմ : զանիկա անխնամ թողուցի : Բայց
այսպէս չէ : Այս քովի մարգարտածաղիկը՝ այնքան գեղեցիկ ,
այնքան մեծաշուք եւ զոր կը նախընտրեն ան է պատճառը : Վեր-
ջապէս՝ կը գուշակէի , անիկա մեռած է նախանձէն :

« Երջանիկ եղէ՛ք , Պարոն Սիմոն . — ես կը մեկնիմ , կը թո-
ղում սենեակը : Հոս մնալով պիտի մտածեմ՝ աղանիծիս վրայ . եւ
ասիկա շատ գէշ պիտի ընէ զիս : Մնաս բարեա՛ւ » :

ԱՆՆԷԹ

— Է՛հ . լաւ , Պարոն Պէնար , ինծի պիտի պնդէ՞ք տակաւին
թէ ծաղիկ մը չի մեռնիր նախանձէն :

ՖԻԼԻՓ ՏԸ ՄԱՐՎԻՅԼ

ԳԼԱԿ ՀԻՆԵՆՑ

ՆԿԱՐՀԱՆԵԼՈՒԿ



Կօճակաւոր երկու առակերսնեք կը կուրսին , բայց
ո՛ւր է վարպետսնին :

ՄՏԱՄԱՐԶԱԹԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. — Երկու հայր եւ երկու որդի ճաշարան կ'երթան, չորս հաւ սեղան կը բերուի, ամեն մէկը հաս մը կ'ուտէ եւ վերջէն կը նային որ հաւ մը աւելցեր է, ի՞նչպէս կ'ըլլայ:

2. — Պողպատին կտորը կայծքաւին զարնելով ինչո՞ւ կայծ կ'ելլայ:

3. — Գտնէ երկու քիւեր՝ որոնք իրարու վրայ աւելնալով կամ բազմապատկելով նոյն արդիւնքը կուտայ:

4. — Ամբողջ երկայնութեանս վրայ պառկած եմ, եթէ կենամ՝ երկինք կը հասնիմ. եթէ ձեռք ունենամ՝ գողը կը բռնեմ ո՛ւր որ ալ ըլլայ. եթէ աչք ու բերան ունենամ շատ բաներ կրնամ պատմել:

5. — Առջինս է ծովային.
Որ ա՛հ ազդէ նաւագին.
Երկրորդս է մի բառ որ՝
Կապէ անդամքդ բոլոր.
Երկրորդովս ալ ամէն ինչ,
Մ'կրտած է յասիս մինչ,
Չորրորդս է յայնմապէս
Քաջաճայն գիր վերջապէս:

6. — Երեք տարեք կը կրեմ վրաս ու տակ,
Ներքեւ ջուր՝ ու վրաս օդ ու կրակ.
Ջուրս մերք խաղաղ ու հանդարտ, մերք ո՛չ,
Աւելորդ ընդ հուր ընդ ջուր մի պոչ,
Ընդմիջմամբ շնչառութիւն կատարէ,
Ու այդ կերպով ծուխ ու մուխ արձակէ:

7. — Քանի շատ ըլլայ այնքան քիչ կը կռնէ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԽՃԲԱԳՐՈՒԹԵԱՆ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ Եւ
ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն
կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԱՌԻՄԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ — ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրին դէմ

44

1952-1953

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

Ն Ի

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր աւարիէն սկսեալ Հանրագիտակի կը հրատարակուի շաբաթական 20-22 էջէ բաղկացեալ եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վսեմառականացի, 22 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 ղրուշ

Գաւառաց »

35 »

Արաատահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վսեմառականացի 12 տեսր զատ առնել ուզողը պէտք է վճարէ 12 ղրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱՆԻՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդավուր

Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան

Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան

Դոնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրքէրեան

Երզնկա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան

Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման

Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալճանեան

Էրզնկա, Տիգրան էֆ. Բրուտեան

Էրզնկա, Կարապետ էֆ. Գոճանեան

Թեֆլիսալ, Ասատուր էֆ. Արսէնեան

Խաբեբը, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Կեսաբիա, Երուանդ էֆ. Երկաթեան

Կիւրիս, Գրիգոր Մ. էֆ. Խանդավուր

Հալեպ, Մ. էֆ. Ամատեան

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան

Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս ԲՆ. Շահինեան

Մարզուսն, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան

Պարսիգալ, Ստեփան էֆ. Մակարեան

Սամսուն, Յովհաննէս էֆ. Նիքարալեան

Սրվազ, Մանուկ էֆ. Պէյլէրեան

Սիւս հաճի Բեօյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Վեզիր Բեօրիս » » »

Տիւրքիսիս, Լեւոն էֆ. Սրապեան

Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակապրոշմ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քաճիկս ընել): Նամակապրոշմ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: